տվյալների իսկությունը ստուգելու համար պատճառաբանված որոշման կայացված լինելու առկայության վերաբերյալ եզրահանգում կատարելու համար:

Ինչ վերաբերում է պատասխանողի այն պնդմանը, որ հայցվորի ներկայացված տվյալների ստուգման աղբյուրն եղել է պաշտոնական և համապատասխանում է Կարգի 67-րդ կետի կարգավորումներին, ապա Դատարանը նկատի ունենալով, որ պատասխանողի կողմից կայացված թիվ 3 արձանագրությունն ենթակա է անվավեր ճանաչման վերջինիս կողմից պատճառաբանված որոշման բացակայության հիմքով, գտնում է, որ նման պայմաններում վերը նշված փաստի առկայությունը կամ բացակայությունն էական նշանակություն չունի սույն գործի լուծման համար:

Ելնելով վերոնշյալից, Դատարանը ներկայացված պահանջը համարում է հիմնավոր, ուստի ՀԷՄՀԱՐ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի պետական համալսարան հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/225 ծածկագրով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար անխափան սնուցման սարքերի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած համարելու վերաբերյալ 31.10.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է բավարարման:

6. Դատական ծախսեր և հայցի ապահովման միջոցի հարց.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է սահմանված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, գալիս է այն եզրահանգման, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել բավարարված հայցապահանջի չափին համամասնորեն նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. ՀԷՄՀԱՐ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի պետական համալսարան հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/225 ծածկագրով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար անխափան սնուցման սարքերի

գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած համարելու վերաբերյալ 31.10.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

1.1 Երևանի պետական համալսարան հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/225 ծածկագրով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար անխափան սնուցման սարքերի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած համարելու վերաբերյալ 31.10.2024 թվականի որոշումն որոշումը ճանաչել անվավեր:

2. Երևանի պետական համալսարան հիմնադրամից հօգուտ ԷՄՀԱՐ ՍՊ ընկերության բռնագանձել՝ 100.000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am